

**Արտատպված է՝ Շուրմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964:
Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:**

«ՄՐՑԱԿԻՑՆԵՐԸ»

Ամեն անգամ, տարվա ամենաշոգ օրերին, երբ մարդիկ փախչում են որն այստեղ, որն այնտեղ, իսկ վագոնում կռիվ է գնում տեղի համար, ինչպես, թող կողքին հիշված չլինի, սինագոգում մեծ տոներին, հենց այդ ժամանակ հայտնվում են նրանք երկուսով՝ մի կին և մի տղամարդ:

Տղամարդը սև է, հաստավիզ, զգգգված, աչքի մեկը հատ ընկած: Կինը՝ կարմրաթուշ, լղար, չեչոտ: Երկուսն էլ մաշված, քրքրված շորերով, երկուսն էլ կարկատած ոտնամաններով և երկուսն էլ միևնույն ապրանքով՝ կինն էլ զամբյուղով, տղամարդն էլ զամբյուղով: Տղամարդն ունի ոլործուն կարկանդակներ, ամուր եփած հավկիթներ, սելտերյան ջրի շշեր և նարինջ, կինն էլ ունի նույն կարկանդակները, հավկիթները, շշերն ու նարինջը:

Պատահում է երբեմն էլ, որ տղամարդու զամբյուղում լինում է ֆունտերով կշռած կաղին, բալ, սև կեռաս կամ կանաչ, քացախի նման թթու խաղող: Այդ ժամանակ կինն էլ է հայտնվում հար և նման բալով, կեռասով կամ խաղողով:

Եվ նրանք երկուսով էլ գալիս են միաժամանակ, խցկվում են, գնում միևնույն վագոնի դռան մեջ ու խոսում նույն լեզվով, բայց տարբեր առոգանությամբ: Տղամարդը մի քիչ ռնգախոս է, «ր» տառը չի արտասանում, լմվացնում է, ասես բերանի միջինը լեզու չէ, իսկ կինը շվշվացնում է, և լեզուն կարծես զբաղեցրել է ամբողջ բերանը:

Դուք միգուցե կարծում եք, թե նրանք զգում են մեկ-մեկու ապրանքի գինը, մրցում են կամ ախտյաններ են: Աստված ազատի: Ապրանքների գները երկուսի մոտ էլ նույնն է, և մրցակցությունը նրանց միջև կայանում է նրանում, որ յուրաքանչյուրն աշխատում է յուր հանդեպ որքան կարող է խղճահարություն արթնացնել: Երկուսն էլ ձեզ աղաչում են՝ խղճալ իրենց հինգ որբերին (նա էլ ունի հինգ որբ, նա էլ): Երկուսն էլ նայում են ձեր աչքերի մեջ ու խցկում իրենց ապրանքը ուղիղ ձեր քիթը և համոզում այնքան ժամանակ, մինչև որ դուք — պետք է, թե պետք չէ, որևէ բան գնում եք:

Ճիշտ է, այդպիսի խոսքերից, լացից ու աղերսանքից հետո, դուք ձեզ մի քիչ կորցնում եք, չեք իմանում ումից գնեք՝ սրանի՞ց թե նրանից: Եվ դուք, իհարկե, որոշում եք ոչ մեկին էլ չվիրավորել, այսինքն՝ երկուսից էլ գնել: Բայց նրանք չեն համաձայնում:

— Որ առնում եք, գոնե մեկից առեք... Երկու հարսանիքում մեկ անգամից չե՛ն պարում:

Դուք ցանկանում եք խղճմտանքով վարվել, մեկ անգամ մեկից գնել, մյուս անգամ՝ մյուսից, բայց դրա համար այնպես են շշպոում, որ ձեր տեղը չեք գտնում:

— Ողորմա՛ծ պարոն: Այդ ինչո՞վ ձեզ այսօր դուր չեկա:

Կամ.

— Հարգելի՛ս: Անցյալ շաբաթ դուք ինձնից առաք, և կարելի է կարծե՛լ, որ ոչ թունավորվեցիք, ոչ էլ խեղդվեցիք...

Այդ ժամանակ դուք բարոյագետի հովեր եք առնում և սկսում եք խրատել. ախր մյուսն էլ հոգի ունի, նա էլ է ուզում ապրել, ինչպես գերմանացիք ասում են. «Դու էլ ապրիր, ուրիշին էլ թույլ տուր ապրել»... Դրան դուք պատասխան ստանում եք ոչ թե գերմաներեն, այլ պարզ, հրեերեն լեզվով, ճիշտ է, այլաբանորեն, բայց միանգամայն հասկանալի:

— Քեռի ջան: Մի կնկա հետ, ներեցեք արտահայտությանս, միանգամից երկու տոնավաճառ չեն գնում...

Այսպես է արդեն, բարեկամս: Դուք մի փորձեք ամբողջ աշխարհը գոհացնել, դա ձեզ երբեք չի հաջողվի, իսկ թե բան է, խելքիդ փչեց ճշմարտության համար ճակատ տալ, քթիցդ կգա: Դա սեփական փորձից գիտեմ: Ես ձեզ կարող եմ մի հետաքրքիր պատմություն անել, թե ինչպես մեկ անգամ հիմար դրության մեջ ընկա, ուզեցի մեկին հաշտեցնել մի կնոջ հետ, բայց բանը վերջացավ նրանով, որ սեփական կնոջիցս գորս դու պատվիրեցեր, դաս ստացա: Բայց ես վախենում եմ մի պատմությունը մյուսին խառնեմ և որպեսզի հիմնականից չշեղվեմ, չնայած իրականում պատահում է և այդպես, որ եթե մի որևէ բան ես առաջարկում, փոխարենը լսում է մի այնպիսի ապշեցուցիչ վայրահաշություն, որ... Մի խոսքով, վերադառնանք մեր պատմությանը:

Դա պատահեց աշնանը, մի անձրևային օր: Երկինքը լալիս էր, գետնի վրա՝ խավար ու անհուսություն, իսկ կայարանում՝ լիքը ժողովուրդ: Ճամփորդները ներսուղուրս են անում: Բոլորը վազում են, հրմշկում, իսկ մեր հրեաները, ինչպես իրենց սովորությունն է, ամենից շատ: Շտապում են, խցկվում, լոք տալիս միմյանց վրայով՝ ճամպրուկներով, կապոցներով, անկողիններով: Աղմուկ, աղաղակ, իրարանցում, Եվ ամենախիտ տեղում — նրանք՝ կինը և տղամարդը: Ինչպես միշտ, երկուսն էլ ծանրաբեռնված են ամեն տեսակի նպարեղենով, և, ինչպես միշտ, երկուսով էլ խցկվում են միևնույն դուռը: Եվ հանկարծ... Ի՞նչ պատահեց: Երկուսի գամբյուղներն էլ գետնի վրա են, կարկանդակները, հավկիթները, սելտեյան ջրի շշերը, նարինջները թափված են ցեխի մեջ, իսկ օդի մեջ՝ ճիչ, աղաղակ, արցունքներ և անեծք, որոնք խառնվում են կոնդուկտորների քրքիջին և ուղևորների ձայներին: Զանգ, սուլոց, մի բոպե ևս, ու մենք գնում ենք:

Վագոնում խոսակցություն է սկսվում, մարդիկ չարախոսում են և այն էլ բոլորը միասին, ինչպես կանայք աղոթարանում կամ սագերը՝ տոնավաճառում... Դժվար է որսալ, թե ինչի շուրջն է, միայն առանձին դարձվածքներ են հասնում:

— Ոլործուն կարկանդակների հո՛ւնձ...

— Ձվերի ջա՛րդ:

— Նարինջներն ի՞նչ էին արել:

— Պարզ չի՞: Ժանդարմը:

— Դուք որքա՞ն եք գնահատում վնասը:

— Տեղն էր: Թո՛ղ չխցկվեն, թո՛ղ գահլա չտանեն:

— Հապա ի՞նչ անեն: Մարդիկ վաստակ են փնտրում:

— Հա՛, հա՛, հա՛,— հնչում է մի թանձր բաս:— Հրեական վաստակ:

— Ահա՛ թե ինչ,— ի պատասխան լսվում է մի ծղրտուն ձայն,— դուք կարո՞ղ եք ավելի լավը առաջարկել: Տվե՛ք այստեղ:

— Երիտասա՛րդ: Ես ձեզ չդիմեցի,— թնդում է բասը:

— Ինձ չեք դիմե՞լ: Իսկ ես, ահա, ձեզ եմ դիմում. դուք կարո՞ղ եք մի ավելի լավ վաստակի միջոց առաջարկել: Ա՛խ, դուք լռո՞ւմ եք: Հապա ինչո՞ւ եք լռում:

— Ի՞նչ է ուզում ինձանից այս երիտասարդը:

— Ի՞նչ պիտի ուզեմ: Դուք ասում եք «հրեական վաստակ»,— ես էլ հարցնում եմ՝ դուք ավելի լավը ունե՞ք: Տվե՛ք այստեղ:

— Տես ո՛նց է կպել: Ասացե՛ք խնդրեմ:

— Լռեցե՛ք, սո՛ւս արեք: Ահա և նա:

— Ո՞վ :

— Դե նա էլի, զամբյուղով կինը:

— Ո՞ւր է նա, այդ գեղեցկուհին: Ո՞ւր է:

— Դե հրե՛ս էլի, հրե՛ս:

Դեմքը կարմրատակած, ծաղկահար, լացից ուռած աչքերով, դատարկ զամբյուղով բոթբոթելով տեղ է փնտրում, հետո զամբյուղը կործում է հատակին, նստում վրան, աչքերը թաքցնում հնամաշ շալի մեջ ու կամացուկ թնկթնկում:

Վագոնում լռություն է տիրում: Խոսակցությունները լռել են: Ասես բոլորը համրացել են: Եվ հանկարծ լավեց թանձր բասը.

— Ի՞նչ եք լռել, բարի մարդիկ:

— Իսկ ինչո՞ւ գոռանք:

— Հարկավոր է մի ինչ-որ չափով հավաքել:

Ա՛յ քեզ հետաքրքիր պատմություն: Գիտե՞ք ով է ասում: Հենց նա, որ ծիծաղում էր հրեական վաստակի վրա: Տարօրինակ անձնավորություն՝ տարօրինակ գդակով— ինչ-որ կարտուզանման, պլպլան, ուղիղ, հովարով: Դրան ավելացրած նաև կապույտ ակնոց, այնքան կապույտ, որ աչքերը չեն երևում: Աչք չկա, միայն կարտոֆիլի նման մսոտ, հաստ քիթն է ցցված:

Կարճատև մտածմունքից հետո նա պոկում է գլխից գդակը, նրա մեջ նետում մի քանի արծաթ դրամ և որոտալով իր բաս ձայնով, անցնում է մեկ ուղևորից մյուսը:

— Տվեցե՛ք, որքան կարող եք: Մեկը շատ— մեկը քիչ՝ փեշքեշ ձիու ատամներին չեն նայում:

Մարդիկ ձեռքները տարան գրպանները, բաց արին քսակները, և կարտուզի մեջ սկսեցին պղնձյա և արծաթյա դրամներ թափվել: Ուղևորների մեջ մի ռուս մարդ կար մեծ սապոգներով, արծաթե շղթան պարանոցին: Նա հորանջեց, երեսը խաչակնքեց և նույնպես տվեց: Եվ միայն մի ուղևոր հրաժարվեց որևէ բան տալուց: Դա հենց նա էր, որ այնպես մոլեգին հանդես եկավ ի

պաշտպանություն «հրեական վաստակի»։ դա երիտասարդ էր, ինտելիգենտ, թխլիկ թշերով, շիկամազ, սեպաձև, փոքրիկ մորուքով և ոսկե պենսնետով։ Մեկը այն երիտասարդ մարդկանցից, որոնք ունենում են հարուստ ծնողներ, հարուստ աներ և զոքանչ, որոնց գրպանները լիքը փող է, բայց ճամփորդում են երրորդ կարգով, այնքան որ փողը ափսոսում են։

— Երիտասարդ, նվիրեցեք ինչքան որ կկամենաք,— դիմեց նրան կապույտ ակնոցավորը։

— Ես չեմ նվիրում,— պատասխանեց ինտելիգենտը։

— Ինչո՞ւ։

— Այդպես։ Սկզբունքով դեմ եմ։

— Այդպես էլ գիտեի։

— Որտեղի՞ց գիտեիք։

— Քո թշերից, որ շատ համապատասխան է ատամներիդ... Նայիր պանի կոշկաճտքին, ճանաչիր նրա հագնողին...

Ինտելիգենտը բռնկվեց, նույնիսկ պենսեն գցեց և ծղրտոցով հարձակվեց ակնոցավորի վրա։

— Դուք իզնորա՛նտ եք։ Անտա՛շ։ Գռեհի՛կ։ Անամո՛թ։ Եվ լկտի նույնպես։

— Փա՛ռք աստծու։ Մենակ թե ոչ խոզ։— Ամենաբարեհամբույր տեսքով ասաց բասը և դիմեց աչքերն ուռած, արտասուք թափող կնոջը։

— Մորքուր։ Միգուցե բավական է, ինչքան որ լաց եղաք։

Զե՛ո որ դուք փչացնում եք ձեր չքնաղ աչքերը։ Պահեցեք ձեր ափը, ստացեք ձեր մանրը։

Բայց ա՛յ քեզ տարօրինակ կին։ Ես կարծում էի, թե նա այդքան դրամը տեսնելով, կսկսի օրհնել ու շնորհակալություն հայտնել։ Բոլորովին ո՛չ։ Օրհնանքի փոխարեն նրա բերանից անեծք էր, որ սկսեց թափվել։ Ասես ջուրը ճեղքել էր և խփում էր հայիոյանքի շատրվանը։

— Էս ամենի պատճառը նա է, վիզը տակը մնա հա՛, դուզ տեղում վեր ընկնի ջարդվի, փշրվի, ողորմա՛ծ աստված։ Բոլո՛րը նրա պատճառով եղավ. ո՛վ խոնավ հող-մայրիկ, ո՛վ հայրիկ-ամենակալ։ Ողջ-առողջ տուն չհասնի, ցավն ընկնի ջանը, խոլերը, կրակը, ժանտախտը։ Բարով տեսնեմ ուռչի։ Բարով տեսնեմ չորանա։ Բարով տեսնեմ կռանա, չանգալ դառնա...

Տե՛ր իմ աստված, այսքան անեծք որտեղի՞ց է ճարում։ Դեռ լավ էր, որ կապույտ ակնոցավորը նրան ընդհատեց։

— Հերիք է, օրհնյալ տիրուհի։ Ավելի լավ է, ասեք, թե կոնդուկտորները ինչո՞ւ համար էին ձեզ նեղացնում։

Կինը իր ուռած աչքերով նայեց նրան.

— Ա՛մենը նրա պատճառով, ա՛յ տեսնեմ աստծու կրակը թափվի գլխին, թիքա-թիքա անի։

Վախեցավ, թե ես կխլեմ իրեն գնորդներին, վազեց, խցկվեց վագոն, ես էլ վազեցի, առաջ ընկա, բայց նա ձեռքը գցեց զամբյուղիցս ու բռնեց... Ես բղավեցի։ Էդ միջոցին ժանդարմը մոտեցավ և աչքով արեց կոնդուկտորներին, սրանք էլ զամբյուղները վերցրին ու եղած-չեղածը թափեցին ուղիղ ցեխի

մեջ, թող նրա ոսկորները թափվեին ու ավազի տակ թաղվեին, տե՛ր իմ: Կարող եք ինձ հավատալ, ես էսպէս խոսում եմ էն մարդկանց մոտ, որոնք իմ սրտովն են լինում. էն օրվանից, ինչ ես իմ ապրանքով ճամփորդելով առևտուր եմ անում էս գծի վրա, ինձ ոչ ոք և ոչ մի անգամ նույնիսկ մատով դիպած չկա: Իսկ ինչո՞ւ: Կարծում եք իրենց բարությունի՞ց: Թող էնքան չիքան դուրս գա նրա ջանին, ինչքան կարկանդակ ու հավկիթ եմ ստիպված լինում կայարաններում բաժանել: Ճար չկա՛, ամենքին, ամենապուճուրից սկսած մինչև ամենաջոջի ռեխը պիտի բան գցես: Գալիս է ժամանակը, սկսում ես բաժանել— մեկին՝ չոռ ու ցավ, մեկին՝ զահրումար ու զխկում, էն մեկելին՝ չիքան: Ավագ կոնդուկտորը ինքն է վերցնում, վերցնում է ինչ որ խելքին փչում է, իսկ մյուսներին դու պիտի տանես բաժանես— մեկին՝ կարկանդակ, մեկին՝ հավկիթ, մյուսին՝ նարինջ, ինչից որ շատ ունես. նույնիսկ հնոցապանը, սև ցավը բկիցը բռնի, նա էլ դեմ չի, որ բերանը՝ քաղցրացնի, թե չէ ահ է տալիս, թե ժանդարմին կասի... Չի իմանում, ոսկորները ջարդուխուրդ լինի, որ ժանդարմին արդեն «տեսել» եմ: Դա ամեն մի կիրակի իր բաժին նարինջն ունի, էդ հերիք չի, հալա մի ջոկում էլ է՝ ամենալավե՛րը, ամենամեծե՛րն ու սիրունե՛րը...

— Մորքո՛ւր,— ընդհատում է նրան կապույտ ակնոցավորը,— որքան որ ես հասկանում եմ, դուք ձեր այդ գործով պետք է որ ոսկու մեջ լինեիք:

— Ի՞նչ եք ասում,— պատասխանում է կինը ասես արդարանալով:— Հազիվ ես փրկում էն, ինչ ծախած ես լինում: Իսկ երբեմն էլ, պատահում է, որ պետք է թույլտվություն ստանաս, քոռ կոպեկի կարոտ ես մնում: Տնաքանդություն, ուրիշ ոչինչ:

— Ձեր ինչի՞ն է պետք այդ առևտուրը:

— Հապա ինչ անեմ: Գողություն՞ւն: Հինգ երեխա ունեմ, հինգ հատ չիքան դուրս գա դրա փորին: Ես էլ հիվա՛նդ, ա՛յ, տեսնեմ էսօրվանից հիվանդանա տեղաշոր ընկնի մինչև եկող աշուն: Նա չէ՞ր, որ գործի գլխին քար գցեց, ա՛յ տեսնեմ քարի տակովը լինի: Էն տեսակ գործը, էն տեսակ շահավետ գործը...

— Շահավե՞տ:

— Ոսկի՛ գործ: Ձեռնտու՛: Գդալն առնես ու քաշես:

— Թույլ տվեք, մորքուր, դուք ախր հենց հիմա ասացիք, թե տնաքանդություն է:

— Հապա ձեր ասելով դա ինչ է, շահավետություն՞ւն, երբ կեսից շատը ձրի բաժանում ես կոնդուկտորին և ավագ կոնդուկտորին, իսկ կիրակի օրերն էլ՝ ոստիկանին: Թե՞ աղբյուր ունեմ, որ մշտական բխում է, թե՞ անտակ հոր, թե՞ գողացված փող:

Կապույտ ակնոցավորը համբերությունը կորցնում է.

— Ձեզ մոտ, մորքուր, մեկ ամառ է, մեկ ձմեռ, բան հասկանալ չի լինի...

— Ի՞նչ կարող եմ անել: Ես ի՞նչ մեղք ունեմ: Ամբողջ մեղքը նրա՛նն է, նրա՛նը, ով ինձ կործանեց, բարով տեսնեմ կործանվի: Ուտքից գլուխ մի քնձռոտ դերձակ էր, կարկատան էր անում, բնդում էր, հազիվհազ մի երկու կոպեկ վաստակում էր, ինչպես ասում են, ջրի ու շիլայի փողը հանում էր: Բայց չէ՛, ոնց կլինի, ինձ նախանձեց, տեսավ որ ես, ա՛յ տեսնեմ դրա աչքերը դուրս թոնեն, տեսավ որ ես մի կտոր հաց ունեմ ուտելու, ա՛յ որդերը նրան ուտեն, և էս զամբյուղով հինգ որբ եմ պահում... Եվ ահա ինքն էլ գնաց իրեն համար զամբյուղ առավ, ա՛յ տեսնեմ աղը թափվի աչքերի մեջը, քարերը շուռ գան սրտին, գնաց ու առավ, աստված տար՝ էդ փողով նրա համար պատանք առնեի, տե՛ր իմ

երկնային թագավոր: Էդ ի՞նչ բան է, հարցնում եմ նրան: «Ջամբյուղ», պատասխանում է: «Իսկ ի՞նչ պիտի անես զամբյուղով», հարցնում եմ: «Ինչ որ դու»: «Դա ինչ կնշանակի», հարցնում եմ: «Հենց այն էլ կնշանակի, պատասխանում է, որ ես էլ ունեմ հինգ երեխա, որոնք ուտել են ուզում... Դու, ասում է, նրանց չես կշտացնի...»:

Դե, ինչ կարող ես անել: Եվ հրես, ինչպես տեսնում եք, զամբյուղն առած ման է գալիս կրնկակոխ ու կրում տանում իմ բոլոր գնորդների համար, ա՛յ տեսնեմ ատամները մեկ-մեկ քաշեն, մի կտոր հացից ինձ զրկեց, ողորմա՛ծ աստված: Դու նրան թիքա-թիքա անես...

Կապույտ ակնոցավորը մի միտք հղացավ, որ, ճիշտն ասած, մեր գլխումն էլ էր հղացել.

— Իսկ ինչո՞ւ եք դուք երկուսով միևնույն տեղում դոփում:

Կինը հայացքը հառում է նրան:

— Հապա ի՞նչ անենք:

— Ուրիշ տեղ գտեք ձեզ համար: Երթուղին մեծ է:

— Հապա նա:

— Ո՞վ:

— Իմ մարդը:

— Ի՞նչ մարդ:

— Իմ երկրորդ մարդը:

— Ի՞նչ երկրորդ մարդ:

Կնոջ ծաղկատար կարմիր դեմքը ավելի է կարմրատակում:

— Ի՞նչ կնշանակի՝ ինչ երկրորդ մարդ: Չե՞ որ նա, էդ գրողի տարածը իմ մարդն է, իմ երկրորդ մարդը, վա՛յ իմ գլխին:

Բոլորը վեր են թռչում տեղներից:

— Նա, ձեր այդ մրցակիցը, ուրեմն, ձեր երկրորդ մա՞րդն է:

— Հապա ի՞նչ էիք կարծում: Առաջի՞նն է, խե՛ղ-խե՛ղ: Թե որ իմ առաջին մարդը, աստված հոգին լուսավորի, ողջ լինե՛ր...— Ծոր տալով ու երգաձայն ասում է կինը և, երևում է, ուզում է պատմել, թե ով և ինչ է եղել առաջին մարդը:

Բայց ո՞վ է լսողը: Բոլորը խոսում են, աղմկում, սրախոսում և ծիծաղում, ծիծաղում, ծիծաղում...

Միգուցե դուք կասեք, թե ինչ կա այդտեղ ծիծաղելի...